Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

2025թ. օգոստոսի 30-սեպտեմբերի 5-ը Սիան գործուղման արդյունքների մասին

1. ԳՈՐԾՈՒՂՎԱԾ ԱՆՁ

Սարոյան Լիլիթ

2. ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆԸ

ՀՀ տրածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության արտաքին կապերի վարչության պետ

3. ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՎԱՅՐԸ ԵՎ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

Սիան (ՉԺՀ), 30.08.2025 - 5.09.2025

4. ՀՐԱՎԻՐՈՂ ԿՈՂՄԸ

Ասիական զարգացման բանկ (ԱԶԲ)

5. ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ (ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ Ո՞Ր ԽՆԴՐԻ ԼՈՒԾՄԱՆ ՀԱՄԱՐ ԷՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԳՈՐԾՈՒՂՈՒՄԸ)

Գործուղման հիմնական նպատակն էր ուսումնասիրել ազգային և միջազգային մակարդակներում գնահատման համակարգերի լավագույն փորձերը՝ մասնակցելով փորձագիտական քննարկումներին և խորացնելու համագործակցությունը ոլորտում գործող միջազգային կազմակերպությունների և գործընկերների հետ: Գործուղումը նախատեսված էր մասնավորապես պետական կառավարման, գնահատման մեխանիզմների կատարելագործման և ապացույցների վրա հիմնված քաղաքականությունների մշակման աշխատանքային խնդիրների լուծման համար:

6. ՔՆՆԱՐԿՎԱԾ ԹԵՄԱՆԵՐԸ

Գործուղման շրջանակում մասնակցել եմ մի շարք պլենար և զուգահեռ աշխատաժողովների, որոնց ընթացքում քննարկվեցին հետևյալ հիմնական թեմաները.

- Ապացույցների վրա հիմնված կառավարում և ռեսուրսների արդյունավետ կառավարում
- Գնահատման ազգային համակարգերի կայացում և պետական համակարգի ներսում դրանց դերը
- Կլիմայի ֆինանսավորման մոբիլիզացում և շրջակա միջավայրի դիմացկունություն
- Գնահատման գլոբալ չափանիշների կիրառում և արդյունքներին ուղղված կառավարում
- Երիտասարդների ներգրավվածությունը և սերունդների միջև գործընկերային մեխանիզմներ
- Մասնավոր հատվածի դերը զարգացման մեջ և համագործակցությունը պետության հետ

7. ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԸ, ԵԼՈՒՅԹՆԵՐԸ, ԲԱՐՁՐԱՑՎԱԾ ԿԱՄ ՔՆՆԱՐԿՎԱԾ ՀԱՐՑԵՐԸ

Մասնակցել եմ տարբեր ձևաչափի քննարկումների՝ ներառյալ «Fireside Chat», «World Café», ինչպես նաև մի շարք պլենար և թեմատիկ քննարկումներ:

Քննարկված հարցեր.

- Ինչպե՞ս ապահովել պետական ծրագրերի գնահատման մեխանիզմների կայուն զարգացումը
- Ինչպիսի՞ դեր կարող է խաղալ մասնավոր հատվածը սոցիալ-տնտեսական գնահատման գործընթացներում
- Ինչպե՞ս մոբիլիզացնել կլիմայի ֆինանսավորումը կայուն զարգացման նպատակով
- Երիտասարդների ներառումը պետական կառավարման որոշումների մեջ որպես երկարաժամկետ ներդրում

8. ՀԱՆԴԻՊՄԱՆ ԿԱՄ ՀԱՎԱՔԻ ԺԱՄԱՆԱԿ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ, ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՍՏՈՐԱԳՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

Միջոցառման ժամանակ իրավական կամ միջկառավարական փաստաթղթեր չեն ստորագրվել, սակայն ձեռք բերվեցին մի շարք պայմանավորվածություններ՝ միջազգային գործընկերների հետ համագործակցության խորացման վերաբերյալ: Մասնավորապես՝ պայմանավորվածություն ձեռք բերվեց տեղեկատվության փոխանակման, համատեղ վերլուծական աշխատանքների, և հնարավոր մասնագիտական վերապատրաստման ծրագրերի ուղղությամբ:

9. ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԴՐԱՆՑ ԸՆԹԱՑՔ ՏԱԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԸ՝ ԵՂԱՆԱԿԸ, ՁԵՎԸ, ԺԱՄԿԵՏՆԵՐԸ, ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐԸ, ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Քննարկումների արդյունքում ձևավորվեցին մի շարք գաղափարներ ու առաջարկներ՝ գնահատման ազգային համակարգերի կատարելագործման, երիտասարդների և մասնավոր հատվածի ներգրավման, ինչպես նաև միջազգային համագործակցության ամրապնդման ուղղությամբ, որոնք նպատակահարմար է քննարկել և զուգահեռաբար կիրառել ոլորտային զարգացման շրջանակում:

10. ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ, ԱՄՍԱԹԻՎԸ

11.09.2025թ.